

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2002թ. հունվար-դեկտեմբերի ՀՆԱ-ի ցուցանիշը


Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2002թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1357280.3 մլն.դրամ, իսկ դրա աճի տեմպը 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 112.9%:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում տնտեսության բազային ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, տնտեսության 5 բազային ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 114.7% աճ՝ 2001թ. հունվար-դեկտեմբերի 110.6%-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ճյուղերի տեսակարար կշիռը 2001թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ ավելացել է 1.4 տոկոսային կետով: Ընդ որում, շինարարության ճյուղի տեսակարար կշռի աճը կազմել է 3.2 տոկոսային կետ:

2002թ. հունվար-դեկտեմբերին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն. ընթացիկ գներով¹ կազմել է 357.3 հազ.դրամ կամ 623 ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), այն դեպքում, երբ 2001թ. համապատասխան ցուցանիշը կազմել էր 309.2 հազ. դրամ կամ 557 դոլար:

Համախառն ներքին արդյունքի դինամիկան

(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)



¹ Մեկ շնչի հաշվող ՀՆԱ-ի հաշվարկման հիմքում դեռևս դրված չեն 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված տվյալները, որոնց ներդրումը մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկներում նախատեսված է սկսել 2003թ.-ից:

2002թ. ՀՆԱ-ի արտադրությունը ըստ ժամանակահատվածների

(ընթացիկ գներով)

	ՀՆԱ, մլն.դրամ	ՀՆԱ, մլն.դոլար	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	
			դրամ	դոլար
Հունվար	44982.9	79.7	11838	21
Հունվար - փետրվար	100429.9	177.9	26430	47
Հունվար - մարտ	163311.6	288.0	42985	76
Հունվար - ապրիլ	228307.7	400.7	60116	106
Հունվար – մայիս	312849.7	547.0	82361	144
Հունվար – հունիս	435737.4	759.8	114716	200
Հունվար – հուլիս	562471.8	982.7	148085	259
Հունվար – օգոստոս	692274.4	1213.1	182245	319
Հունվար – սեպտեմբեր	878527.4	1541.7	231228	406
Հունվար – հոկտեմբեր	1075413.5	1883.1	283138	496
Հունվար – նոյեմբեր	1205499.0	2106.3	317312	554
Հունվար – դեկտեմբեր	1357280.3	2367.3	357282	623

Արտադրված ՀՆԱ-ի դինամիկան տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%-ով` նախորդ տարվա նկատմամբ)

	2001	2002
Համախառն ներքին արդյունք. ընդամենը	109.6	112.9
<i>ՀՆԱ-ն հիմնական գներով</i>	<i>108.8</i>	<i>112.6</i>
դրամից`		
արդյունաբերություն	103.8	114.2
շինարարություն	114.5	144.6
գյուղատնտեսություն	111.6	104.4
տրանսպորտ և կապ	116.0	106.0
առևտուր և հասարակական սնունդ	115.5	115.6
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդաներ) հարկեր	117.1	113.8

ՀՆԱ-ի հավելաճը և կառուցվածքը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

	ՀՆԱ-ի հավելաճը ճյուղերի հաշվին, տոկոսային կետ		% -ով` ընդամենի նկատմամբ	
	2001	2002	2001	2002
	<i>1 եռամսյակ (հունվար-մարտ)</i>			
Ընդամենը ՀՆԱ	12.3	7.4	100.0	100.0
այդ թվում`				
արդյունաբերություն	2.6	3.7	26.9	28.7
շինարարություն	0.8	0.6	5.7	6.2
գյուղատնտեսություն	0.1	0.6	11.9	11.3
առևտուր	2.1	1.4	15.4	15.5
տրանսպորտ և կապ	0.5	0.4	7.7	7.6
այլ ճյուղեր	0.4	0.6	15.6	15.0
զուտ հարկեր	5.8	0.1	16.8	15.7
	<i>6 ամիս (հունվար-հունիս)</i>			
Ընդամենը ՀՆԱ	7.1	10.1	100.0	100.0
այդ թվում`				
արդյունաբերություն	0.7	3.2	26.1	26.6
շինարարություն	0.2	2.3	7.3	9.1
գյուղատնտեսություն	- 0.2	0.1	17.9	16.7
առևտուր	1.3	1.4	10.0	10.3
տրանսպորտ և կապ	0.6	0.2	5.1	4.8
այլ ճյուղեր	1.3	1.3	20.4	19.2
զուտ հարկեր	3.2	1.6	13.2	13.3
	<i>9 ամիս (հունվար-սեպտեմբեր)</i>			
Ընդամենը ՀՆԱ	10.2	11.0	100.0	100.0
այդ թվում`				
արդյունաբերություն	0.9	2.5	22.6	22.7
շինարարություն	1.3	3.6	9.4	11.9
գյուղատնտեսություն	2.9	0.8	25.9	24.0
առևտուր	1.2	1.3	8.3	8.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	ՀՆԱ-ի հավելվածը ճյուղերի հաշվին, տոկոսային կետ		% -ով՝ ընդամենի նկատմամբ	
	2001	2002	2001	2002
տրանսպորտ և կապ	1.0	0.2	6.4	6.0
այլ ճյուղեր	0.8	0.8	17.3	16.3
զուտ հարկեր	2.0	1.8	10.1	10.6
	<i>Տարի (հունվար-դեկտեմբեր)</i>			
Ընդամենը ՀՆԱ	9.6	12.9	100.0	100.0
այդ թվում՝				
արդյունաբերություն	0.8	2.9	20.2	20.5
շինարարություն	1.5	4.8	10.7	13.9
գյուղատնտեսություն	2.7	1.1	25.0	23.1
առևտուր	1.5	1.5	9.8	10.0
տրանսպորտ և կապ	1.2	0.4	7.5	7.2
այլ ճյուղեր	0.3	0.9	17.1	15.6
զուտ հարկեր	1.6	1.3	9.7	9.7